

Հոռոմներ (յԱկն եւն), նոյնպէս պատմութեան բերմամբ ունեցած ենք “կրօնիւք վրացի”, Հայեր — չհաշուելով լիովին վրացած՝ ինչպէս նաեւ յունացած ու կորսուած Հայերու բազմութիւն մը: Այս մասին ընենք հոս համառօտ դիտողութիւն մը:

Տայք Հայաստանի մեծագոյն մասին հետ Պարսից բաժնին մէջ մնաց, մինչ Բարձր-Հայք (Բարբրդ-Սպեր, Երզնկայ-Կարին, չժիշիւով աւելի հարաւայինքը) հոռոմէական բաժնին անցան, երբ Հոռոմէացիք եւ Սասանեանք Արշակունեաց Հայաստանը բաժնեցին (387ին) առ ժամն թողով կրկին թագաւորաց ներքեւ: Եւ այսպէս՝ ինչպէս յառաջ դարեր, այնուհետեւ ալ գոնէ չորս դար բախտակից էր Հայաստանի եւ մասնակից անոր պատմութեան, ինչպէս ակնարկուեցան արդէն Վարդանայ եւ Վահանայ Մամիկոնեանց օրերուն այս կողման դէպքերն: Յընթացս ժամանակի Բագրատունիք՝ Բարբրդ-Սպերէն ասդին ընդարձակ կալուածներ ստացած էին նաեւ ի Տայս, ինչպէս այլուր. եւ մինչդեռ կը ջանային եւ ի վերջոյ յաջողեցան վերականգնել Հայաստան՝ գեղեցկաշէն Անի մայրաքաղաքով, չկրցան զայն իրեն նախնական (Արշակու-